

# ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻ ՀԱՎԵՐԺԱՑՈՒՄԸ

Նորահայտ հեռագրեր Միմոն Զավարյանի մահվան առիթով\*

**Հարյուր տարի առաջ, երբ վախճանվեց Միմոն Զավարյանը, համայն հայությունը նշում ու արժևորում էր երկու խոշորագույն մշակութային իրադարձություն՝ հայոց գրերի գյուտի 1500-ամյակը և հայ գրքի տպագրության 400-ամյակը:**

Հայոց երկնակամարը մի պահ մթնեց, և ողջ ազգը՝ առանց հատվածական կամ կուսակցական տարանջատումների, միահամուռ կերպով, գնահատանքի խոսքեր ուղղեց իր կորցրած Մեծ Նահատակի հասցեին: Աշխարհասփյուռ հայությունն աշխարհի տարբեր ծայրերից ցավակցեց Զավարյանի հարազատներին ու կուսակցական ընկերներին, կազմակերպվեցին սգո և խոնարհումի հանդեսներ<sup>1</sup>, որոնք դրանից հետո փատորեն երբեք այլևս համազգային ընդգրկում չունեցան ո՛չ մի այլ ազգային գործչի մահվան հետ կապված: Գրեթե առանց բացառության ողջ պարբերական մամուլը և հանրային-մշակութային ակնառու դեմքերն իրենց պարտքը համարեցին անդրադառնալ Զավարյանի մահվանը:

Ինչո՞ւ հենց Զավարյանն արժանացավ նման համաժողովրդական սիրո ու համազգային գնահատանքի, որոնք էին նրա կերպարի այն առանցքային բնութագրիչները, որոնց առջև փլուզվում էին կուսակցական ու հատվածական տեսանելի և անտեսանելի արգելքներն ու խոչընդոտները:

Նախ՝ ժամանակակիցների ուշադրության կենտրոնում էին հատկապես Զավարյանի բարոյական բարձր որակներն ու մարդկային նկարագիրը<sup>2</sup>, պարզությունն ու համեստությունն անձնական կյանքում ու կենցաղում<sup>3</sup>:

Այդպիսին էր Զավարյանը նաև ազգային-հանրային գործերում, համեստ՝ կատարելության տիպի հասցված: Եվ անգամ համազգային ճանաչման ու համատարած հարգանքի արժանանալով՝ նա երբեք չտա-

133  
Ե (ԺԵ) քաարի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

\*Ընդունվել է տպագրության՝ 1.12.2013:

1 Դրանք տեղի ունեցան հեռավոր Սիբիրից մինչև Մոսկվա, Կ. Պոլիս, Վան, Իզմիր, Տրապիզոն, Մամառն, Ժնև, Բեռլին, Փարիզ, Մարսել, Վառնա, Ալեքսանդրիա, Կահիրե, Մալմաստ, Թավրիզ, Լիվերպուլ, Բոստոն, Դետրոյտ, Ուստր, Նյու Յորք, Ֆրեզնո:

2 Կ. Պոլսի սգահանդեսում, ի թիվս այլոց, դամբանականներ կարդացին Գ. Խաժակը, Սշո Գեղամը, Գ. Վարուժանը, Հ. Շահրիկյանը, Հ. Պոյաձյանը, Ավ. Ահարոնյանը: Տես «Միմոն Զավարյան», հտ. Ա., էջ 250-257, 259-262, 265-267, 274-277: Հիշատակի խոսքերից կարելի է առանձնացնել Գ. Խաժակի, Հ. Զավարյանի, Մ. Վարանդյանի, Է. Ակունու, Ս. Վրացյանի գնահատականները: Տես նույն տեղում, էջեր 91-101, 102-110, 217-224, 196-207, 239-240, 429-430:

3 Այս առումով տեղին է մեջբերել Մ. Վարանդյանի դիպուկ բնութագրումը. «... սակաւապետ էր, ժուժկալ և չափազանց խղճամիտ հանրային դրամներու գործածութեան մէջ»: Տես «Միմոն Զավարյան», հատ. Ա., Դեյրութ, 1983, էջ 22:

ռապեց սեփական ես-ի ցուցադրման ախտով:

Անգամ ՀՅԴ հակառակորդները երկնչում էին Ջավարյանի բարոյական կերպարի, մարդկային նկարագրի առջև՝ չընդունելով կամ չկիսելով նրա քաղաքական-կուսակցական հայացքները: Քանզի Ջավարյանն իր մարդկային հմայքով ուղղակի անառարկելի հեղինակություն էր<sup>4</sup>:

Ջավարյանն իր կուսակցական ընկերներին կամ քաղաքական հակառակորդներին երբեք անձնավորված, ենթակայական գնահատականներ չէր տալիս: Նրա թե՛ գովասանքը, թե՛ քննադատությունը միշտ էլ անաչառ էին. առաջինը՝ պարտավորեցնող և զգոնացնող, երկրորդը՝ բարոյապես սաստող ու խարազանող: Այդ իսկ պատճառով, զավարյանական գովասանքը բոլորի կողմից ընդունվում էր համեստաբար, իսկ քննադատությունը՝ տեղին ու անվերապահ: Իսկ այդ ամենի ելակետը հենց Ջավարյանի արդարամտությունն էր, սեփական անձի օրինակելիությունը, մշտական ինքնագոհաբերումը...

Ի տարբերություն շատ-շատերի՝ Ջավարյանը «թղթի ու գրիչի» հայրենասեր չէր. մշտապես իր ֆիզիկական ներկայությամբ ոգեշնչում ու թևավորում էր ֆիդայիներին և ժողովրդի լուսավորման-գաղափարակերտման մշակներին:

Ջավարյանի մասին խոսելիս նրան իրավամբ բնութագրում ենք իբրև ՀՅԴ հիմնադիրներից, հայտնի գյուղատնտես, մտավորական-մանկավարժ, բարոյական տիպար, հայության հոգսերով ապրող-տառապող, մինչդեռ ինչպես թվարկվածը, այնպես էլ չասվածն ամենևին էլ չեն ամբողջացնում Ջավարյանի կերպարը, քանզի վաղուց արդեն նա մի ինքնուրույն երևույթ է դարձել Հայոց մտապատկերում ու հոգում և կոչվում է հենց այդպես՝ ՄԻՄՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ:

Ս. Ջավարյանի մահվան առիթով Թիֆլիսում հրատարակվող «Հորիզոն»-ի խմբագրության հասցեով ուղարկվել են հազարավոր ցավակցական հեռագրեր: Դրանց աշխարհագրական ընդգրկումը բառի բուն իմաստով համամոլորակային էր՝ Միացյալ Նահանգներից մինչև հեռավորարևելյան Վլադիվոստոկ, ուստի ժամանակին նշված հեռագրերի միայն չնչին մասն է հրապարակվել: Շարունակելով այդ բավականին ծավալուն ու աշխատատար գործը, որի ամբողջացումը մեկ առանձին հատորի տպագրություն է պահանջում, հրապարակում ենք դրանց ևս մի հատվածը, ինչն ինքնին բավական է Ջավարյանի համազգային ճանաչման ու անառարկելի հեղինակության մասին սպառիչ պատկերացում կազմելու համար:

Հեռագրերը պահպանվում են Հայաստանի Ազգային արխիվի ՀՅԴ ֆոնդում և տպագրվում են առաջին անգամ: Լիահույս ենք, որ ներկա հրապարակումը համեստ ներդրում կլինի Մեծ հայրենասերի մասին պատմական վավերագրերի լրացման ու ամբողջացման գործում:

Ավագ Ա. Հարությունյան  
*Պարմ. գիյ. թեկնածու*

4 Նույնիսկ ՀՅԴ ընդգծված հակառակորդ Համբարձում Առաքելյանն իրեն պարտավորված զգաց հիշատակի խոսք ասելու Ջավարյանի մասին: Տե՛ս «Միմոն Ջավարեան», հատ. Ա., էջեր 597-598, 604-605:

# PERPETUATION OF IDEOLOGIES AND WORK

## Newfound telegrams on the occasion of Simon Zavaryan's death

A. H.

ՆՇԽԱՐՆԵՐ

### Թիվ 1

Ուսույե, Իրկուսուկ<sup>5</sup>

Ջավարյանի մահը շքանշան է հեռանում է ճշմարտության և արդարության հավերժ ձգտման ոգին: Ողջ հայ ժողովրդի հետ, ընտանիքով ողբում ենք մեծ մարտիկի գերեզմանին: Հեռավոր Միբիբի խորքերից՝ հին ընկեր Համազասպ Օհանջանյան:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 10: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

### Թիվ 2

Դոնի Ռոստով

Անտոնաց ուսուցչի և ժողովրդի զավակ Ջավարյանի մահը խորապես ցնցեց մեզ: Թող նրա գործունեությունն երիտասարդ սերունդին օրինակ ծառայի: Մեսրոպ Մելիք-Հակոբյանց, Լևոն Վարդանյան, Կարապետ Գրիգորյանց, Թևան Մարգարյան:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 11: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

### Թիվ 3

Բորժոմ

Հանուն ժողովրդական իրավունքների՝ Ջավարյանի իդեալը թող համախմբի մարտիկների լեգեոնը: Բորժոմի Հայկական ընկերություն:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 12: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

### Թիվ 4

Ղարասուրբազար

Ողբում ենք նվիրված գործիչ, իդեալիստ Միմոն Ջավարյանի մահը: Հոգևորական Մեղնիկյան, Տեր-Մովսեսյան, Բարոյան:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 13: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

### Թիվ 5

Խարկով

Խոսք չենք գտնում արտահայտելու հազվագյուտ մեծ բարոյականի տեր մարդ, ճշմարտության դրոշակակիր և անձնական համոզմունքների, լուսավոր գաղափարների պատգամներին մինչև վերջին պահը հավատարիմ ծառայող Ջավարյանի մահվան առթիվ մեր ցնցման աստիճանը: Միանում ենք ընդհանուր վշտին: Հարգող համակիրներ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 15: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

5 Հ. Օհանջանյանն այդ ժամանակ ՀԾԴ-ի հանդեպ իրականացված լիժնյան դատական հաշվեհարդարով արքայազն էր Իրկուսուկի երկրամաս:

Ե (ԺԵ) քաարի, թիվ 4 (44) Խոկրեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

Թիվ 6  
Օրդուրատ

Մեղրիի շրջանի ուսուցիչները խորապես ցնցված են հայ ժողովրդի միակ ազնիվ, անկեղծ բարեկամ, հասարակական գործիչ և ինքնամոռաց Սիմոն Զավարյանի հանկարծակի մահով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 17: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 7  
Թիֆլիս

Թիֆլիս քաղաքի առևտրա-արդյունաբերական ծառայողների ակումբի վարչությունն իր խորին ցավակցությունն է հայտնում հանուն ժողովրդավարական սկզբունքների ջերմեռանդ մարտիկ Սիմոն Զավարյանի մահվան առթիվ: Ծաղկեպսակի փոխարեն՝ բարեգործական նպատակի համար, վարչությունը հանգանակել է քսան ռուբլի: Վարչություն:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 18: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 8  
Ախալքալաք

Սգում ենք Զավարյանի վաղաժամ մահը: «Զավախք»-ի խմբագրություն:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 19: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 9  
Դերբենդ

Աղոթողների հոծ բազմությամբ վաղաժամ մահացած հասարակական գործիչներ Զավարյանի, Քալանթարի<sup>6</sup>, Խատիայանի<sup>7</sup> համար հոգեհանգիստ կատարվեց: Կորուստը մեծ է: Միանում ենք համազգային վշտին: Դերբենդի Հայկական ընկերություն:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 20: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 10  
Ախալքալաք  
Դերենիկ Դեմիրձյանին<sup>8</sup>

Խորապես ցնցված ենք աշխատավոր զանգվածների իրավունքների անդավաճան մարտիկ, հավատավոր իդեալիստ Զավարյանի վաղաժամկետ մահվամբ: Հուղարկավորությամբ մեր ներկայացուցիչն է Դերենիկ Դեմիրձյանը: Համակիրների խումբ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 20: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 11  
Կոստաքչայա

Անկեղծ հարգանքով խնամարկում ենք ժողովրդի բարեկամ, հասարակական գործիչ Սիմոն Զավարյանի շիրիմի առջև: Հայտնում ենք մեր ցավակցությունները հանգուց-յալի ընտանիքին: Մոֆիա և Կոնստանտին Մելիք-Շահնազարյանց:

6 Նկատի ունեն Ալեքսանդր Քալանթարին:

7 Նկատի ունեն Կոնստանդին Խատիայանին:

8 Դ. Դեմիրձյանը միաժամանակ եղել է նաև Արդահանի հասարակայնության ներկայացուցիչը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 22: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն  
նուսերենից:

Թիվ 12  
Սոչի

Անգնահատելի Ջավարյանի անսպասելի մահը խորապես խոցել է մեր հոգին:  
Հովհաննես Ջանոյան, Հակոբ Թռուլաբյան, Մելքոն Տրապիզոնյան:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 23: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն  
նուսերենից:

Թիվ 13  
Խարկով<sup>9</sup>

Ցավում ենք Ջավարյանի վաղաժամ կորուստը: Մի խումբ ուսանողներ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 24: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն  
նուսերենից:

Թիվ 14  
Էջմիածին

Խաչատուր Կարճիկյանին  
Վաղարշապատի երիտասարդությունը խնդրում է ձեզ Ջավարյանի հուղարկա-  
վորությանը լինել մեր ներկայացուցիչը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 32: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն  
նուսերենից:

Թիվ 15  
Նախիջևան

Նախիջևանի գրական խմբակի հայ գրականության բաժանմունքն անկեղծորեն  
ցավակցում է անշահախնդիր գործչի և հազվագյուտ իդեալիստի մահը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 35: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն  
նուսերենից:

Թիվ 16  
Նախիջևան

Թող Ջավարյանի պատանի<sup>10</sup> շիրիմը գաղափարների սրբության և վեհանձնության  
հավերժ հուշարձան լինի: Սիոն վարդապետ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 37: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն  
նուսերենից:

Թիվ 17  
Աստրախան

Հայտնում ենք մեր խորին հարգանքը Սիոնի Ջավարյանի հիշատակի առթիվ:  
Անկախ հասարակական հայացքների ուղղությունից՝ նա իրեն բոլոր ճանաչողների  
համար ժողովրդական գործին անձնուրաց, ազնիվ նվիրված կերպար էր: Շահունյան,  
Խումարյան<sup>11</sup>:

9 Բլանկի վրա տպագրված է նուսերեն տառերով՝ հայերեն:

10 Բնագրում այդպես է տպված՝ юнак: Պետք է հասկանալ «թարմ» իմաստով:

11 Հայտնի բոլշևիկյան գործիչների այս խոսքերը վկայում են Մ. Ջավարյանի համընդհանուր  
ճանաչման ու հեղինակության մասին: Դաշնակցականի մահվան առիթով, տվյալ պատմա-  
շրջանում, սա հայ բոլշևիկների ուղարկած թերևս միակ ու եզակի ցավակցական հեռագիրն  
է:

ՆՇԽԱՐԴՆԵՐ

Ե (ԺԵ) քարի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 39: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն նուսերենից:

Թիվ 18

Կոկանդ

Մահացավ հայ ազգի ամենաիդեալական գործի<sup>12</sup> հզոր ջատագով Զավարյանը: Նրա վաղաժամ մահը ընդհատեց իր ողջ կյանքի ընթացքում վեհ, գաղափարական գործի համար ուժեղ բաբախող ազնիվ սիրտը: Թող շարունակեն քո սուրբ գործը անհամար համակիրներդ: Հոգևորական Ներսես Աբրահամյանց:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 40: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն նուսերենից:

Թիվ 19

Պետերբուրգ

Ցնցված մղձավանջային լուրով և ծանր կորստով, սփոփվում ենք հավատով, որ Միմոն ծնած ժողովուրդն առաջ կքաշի մարտիկների համաստեղություն, քանզի չեն սպառվել բազմաչարչար հայության բարոյական ուժերը և հավերժ են ոգևորող աննկուն մարտիկի պատգամները: Միրական Տիգրանյան<sup>13</sup>, Խորեն Համասփյուռ, Պարույր Լևոնյան, դոկտոր Մարգարյան, Արամ Արամյանց, Միքայել Համասփյուռ, Ալեքսանդր Մարգարյանց, Եզր Տեր-Ավետիքյան:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 43: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն նուսերենից:

Թիվ 20

Շուլավեր

Շուլավերի հասարակությունը ողբում է իր ողջ կյանքը թուրքահայերի կենցաղի բարեվիճակը ձգտած և հանուն դրա աշխատած թանկագին Միմոն Զավարյանի մահը: Արշակ Ղազարյանին<sup>14</sup> լիազորում ենք թաղմանը լինել մեր ներկայացուցիչը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 46: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն նուսերենից:

Թիվ 21

Դոնի Ռոստով

Շիրիմիդ հանգստություն, մինչ գերեզման հայ ժողովրդի հավատարիմ զավակ Զավարյան: Չորեքյան վարդապետ<sup>15</sup>:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 83, թ. 167: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն նուսերենից:

Թիվ 22

Բաքու

Միանում են ազգային առաջնորդ, հերոս Միմոն Զավարյանի հուղարկավորության առթիւ ընդհանուր վշտին: Դոկտոր Մանդիկյան:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 101: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն նուսերենից:

12 Նկատի ունի Արևմտահայաստանի ազատագրությունը:

13 Հետագայում՝ Առաջին Հանրապետության արտաքին գործերի նախարար:

14 Ա. Ղազարյանը ներկայացրել է նաև Կարսի ու Նոր Բայազետի հասարակությունը:

15 Այազա Գևորգ Զ. Չորեքյան Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Թիվ 23  
Մակվա

Հայտնում ենք մեր խորին վիշտը ճշմարտության, արդարության անխնջ ջատագով և հանուն ժողովրդական երջանկության աննկուն մարտիկ Միմոն Զավարյանի վաղաժամ մահվան առթիվ: Մակվայի համալսարանի ուսանողների խումբ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 103: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

ՆՇԽԱՐՆԵՐ

Թիվ 24  
Յարուսավլ<sup>16</sup>

Ցավով ողբում են անմոռաց Զավարյանի մահը: Անհավատալի է, որ արդեն չկա հասարակական կյանքի շարժիչ, հարստահարվող թուրքահայերի անխնջ ջատագով խիղճ, երիտասարդ ուժերի ոգևորող, բյուրեղյա մաքրության մարդ, անփոփոխ իդեալիստը: Աբրահամ Գյուլխանդանյան:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 82, թ. 104: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 25  
Պետերբուրգ

Պետերբուրգի գեղեցիկ արվեստների հայկական ընկերությունը խորապես ցնցված է ազնիվ, մաքուր մարտիկ, իդեալիստ և ժողովրդի անկաշառ բարեկամ Միմոնի վաղաժամ մահվան առթիվ: Խոնարհվում ենք թանկագին շիրիմի առջև և կիսում ընդհանուր ծանր վիշտը: Վարչություն:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 83, թ. 172: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 26  
Պետերբուրգ<sup>17</sup>

Մեծավ Միմոնը: Հայ աշխատավոր ժողովրդի ամենաանկեղծ մարտնչողներից մեկն էլ իջավ գերեզման: Հյուսիսի ցուրտ բևեռից մի խումբ հայ ուսանողներ իրենց հոգիներն են միացնում աշխատավորության և տատապող ազգության ողբին: Հանգիստ ոսկորներիդ, սիրելի ուսուցիչ: Միշտ պատրաստ ենք քայլելու քո մեծ ճանապարհով: Երեսուն ուսանող:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 83, թ. 178: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 27  
Էջմիածին

Ողբում ենք հասարակական գործիչ Զավարյանի վաղախաս մահը: Թուրքահպատակ ճեմարանականների խումբ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 83, թ. 185: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 28  
Բաքու

Ազնիվ, լուսավորյալ հասարակական գործիչին՝ ննջեցյալ Միմոն Զավարյանին հավերժ հիշատակ: «Մոխակ Հայաստան»-ի հրատարակիչ Գրիգորյան սարկավագ:

16 Աբրահամ Գյուլխանդանյանն այդ ժամանակ ուսանում էր Յարուսավլում:  
17 Բնագրում տպված է ռուսերեն տառերով՝ հայերեն:

Ե (ԺԱ) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 83, թ. 187: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն նուսերենից:

Թիվ 29

Բալախանի [Բաքու]

Ողբում եմ հայ ժողովրդի ազնիվ զավակ և ուսուցիչ Ջավարյանի մեծ կորուստը: Շիրիմիդ հանգիստ, իդեալի ասպետ և զոհ<sup>18</sup>: Գերասիմ Բալայան:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 83, թ. 188: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն նուսերենից:

Թիվ 30

Էջմիածին

Ջավարյանը վախճանվեց, բայց հոգին անմահ է: Նրա կյանքի մեծ գաղափարը փայլում է հայ ժողովրդի ասպագայի արշալույսին: Մահակ Թորոսյան:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 83, թ. 196: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն նուսերենից:

Թիվ 31

Բաքու

Կովկասահայ հրատարակչական ընկերության Բաքվի մասնաձյուղը ցավակցում է անփոխարինելի Սիմոն Ջավարյանի մահվան առթիվ: Վարչություն:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 83, թ. 209: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն նուսերենից:

Թիվ 32

Կարս

Խոնարհվում և համբուրում ենք Սիմոնի շիրիմը, ով իր նահատակ կյանքը տվեց մարդկության դժբախտ եղբորը<sup>19</sup>: Նորհատյան, Գրիգորյան:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 83, թ. 214: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն նուսերենից:

Թիվ 33

Թիֆլիս

Փոխանցեք Վասիլիին<sup>20</sup>

Կ. Պօլսից հեռագիր ստացանք՝ դիակը ուղարկվել է «Արքայադուստր Եվգենիա Օլդենբուրգսկայա» շոգենավով, ուղեկցում են երկու ընկեր<sup>21</sup>: Արամ<sup>22</sup>:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 83, թ. 308: Հեռագրական բլանկ: Բնագիր: Թարգմանություն նուսերենից:

18 Այսինքն՝ հանուն իդեալի զոհված:

19 Բնագրում այսպես է, պետք է հասկանալ՝ արևմտահայ եղբորը:

20 Հեռագիրն ուղարկվել էր Թիֆլիս՝ ամենայն հավանականությամբ Ս. Ջավարյանի եղբորը հայտնելու համար:

21 Ուղեկցողներն էին Միամանթոն և Հարություն Տեր-Ստեփանյանը:

22 Արամ Մանուկյան: